

որիւ մեռածներն զգեստներն այրել զի զը
նքրել ելն. Բարձրագոյն հրամանաւ Նորին
Բարձրութիւն իշխան Ա. Օլջենբուրգսկի ու-
ղեորուել է Սըմբրդանդ՝ նոր ամենաեռան-
դուն միջոցներով շրջակայքը վարակումից ա-
զատելու և վարակուած տեղերում հիւան-
դութեան առաջն տոներու համար:



ՄԱՏԵՆԱԼԻՍՈՍՈՒԹԻՒՆ.

ՅԵՍԱՒՍ ԲԵՐԻՍՏՈՍԻ ԵՐԿԵԼԻՈՐ ԿԵԼՆԵՔԸ ԵՒ
ՎԱՐԿԱՊԵՏՈՒԹԻՒՆԸ, հիւսուած չորս աւետարան-
ներից ժամանակագրական
կարգով.—աշխատ. Ցաճատ
քաջ. Մարաղեան. Բագու,
1898.

Թէև այս գրքի հեղինակը յառաջա-
րանում ասում է, որ չաւելի ձեռնհաս և
գիտակ անձանց է թողնում ս. աւետարանի
կամ Ն. Կտակարանի աշխարհաբար թարգ-
մանութիւնն այնպէս ինչպէս որ կայ, բայց
նա ինքը յանձն է տուել թարգմանել ս. աւե-
տարանը միայն թէ չորս աւետարանների
հատուածներն յաջորդաբար այնպէս շարելով
որ մի ամբողջական աւետարանական պատ-
մութիւն յառաջ գայ: Գործը միևնոյն է՝ ար-
դեօք առանձին աւետարաններ էք թարգմա-
նում, թէ նորա զուգրնթաց հատուածները
երկու դէպքում ևս ձեռնհաս պէտք է լինել,
կամ արտաքոյ կարգի համարձակութիւն
ունենալ՝ այսպիսի մի ծանր և խիստ պա-
տասխանատու գործի ձեռնարկելու համար:
Իսկ թէ որչափ ձեռնհաս էր Արժ. Հեղի-
նակը, որչափ զապափար ունի աւետարա-
նի և նորա թարգմանութիւնների մասին՝
այդ ցոյց տալու համար բաւական է յառա-
ջարանի հետեւեալ նախադասութիւնը. «Փա-
խադրութիւնը կատարուած է Եօթանասնից
կոչուած թարգմանութիւնից» (!): Աւետարան
և Եօթանասնից թարգմանութիւն ... Եւ մի
մարդ, որ Բրիստոսից երկու դար առաջ կա-
տարուած Հին Կտակարանի յունարէն թարգ-
մանութիւնն ու ս. Սահակի և ս. Մեսրոպի
մեզ տուած Հին ու Նոր Կտակարանի հայե-

րէն թարգմանութիւնը միմեանց հետ շփոթել
կարող էր՝ համարձակուում է աւետարան
թարգմանել, գիտնական ծանօթութիւննե-
րով զարգարել և իւր այդ խեղճ գոր-
ծը ներկայացնել «եղբայրներին և քոյրերին»
իրրև Բրիստոսի աւետարան: որ կեանքի ու-
ղեցոյց պէտք է լինի, որ պէտք է սովորեցնել,
թէ ինչ պէտք է, անել կատարեալ քրիստո-
նեայ եւ կատարեալ մարդ լինելու համար ելն:
Այսպիսի շարաշար վերաբերումն և յարգա-
նաց պահասութիւն դէպի ս. Գիրքը կարող է
լինել միայն մի ժողովրդի մէջ, որի համար
զապարել է նա կեանքի ուղեցոյց լինելուց: —
Մի տարի առաջ լոյս տեսաւ Արժ. Գր. քաջ.
Մանդակունու նման աշխատութիւնը Հին
Կտակարանի վերաբերեալ՝ մի հաստ գիրք, որի
հեղինակը շատ դէպքում կարողութիւնն չու-
նենալով մինչև իսկ հայերէն գրաբար պարզ
նախադասութիւններն աշխարհաբարի վերա-
ծելու՝ երբայեցեբէն բնագրից է խօսում հե-
ռուից, մօտիկից՝ հնախօսական, պատմական,
լեզուագիտական և ըն ծանօթութիւններ է
ժողովում և կամենում է ամբողջ Հին Կտա-
կարանը, մասամբ թարգմանութիւն մասամբ քա-
ղուածօրէն, հասկանալի լեզուով հայ ընթեր-
ցողների առաջը դնել: — Ծատ գովելի է հար-
կաւ մեր քահանաների մատենագրական ե-
ռանդը, բայց պէտք է չմոռանալ, որ համեա-
տութիւնը ամէն մարդու զարդ լինելով՝ հո-
գեւորականի համար անհրաժեշտ պահանջ է,
մինչ ընդհակառակն հէնց այս ասպարիզի վե-
րայ, մանաւանդ վերջին տարիներս յաճախ
մեծապէս մեղանշում են համեստութեան դէմ:
Մենք հակառակ ասելիք չէինք ունենայ, այլ
հոգեով ու բախ կլինէինք, եթէ մի քահանայ
որին ս. Գիրքը երկար տարիներ հոգեւոր անուշդ
է մատակարարել՝ թէկուզ նա իւր հայերէն
աստուածաշնչից զուրս ոչինչ ծանաչէ, յանձն
է առնում աւետարանի այս կամ այն մասը
կամ նոյն իսկ ամբողջ աւետարաններ ու Հին և
Նոր Կտակարան տաք սրտով և պարզ լեզուով
պատմել ազդատօրէն ու բացառել հասարակ
ժողովրդին: Այսպիսի գրուածներ շատ հար-
կաւոր են և կարող են օգտակար ծառայու-
թիւն մատուցանել, եթէ նոքա շատ թերու-
թիւններ իսկ ունենան բաւական է, որ ջեր-

մեռանդ ոգի շնչին և անկեղծ հաւատ կնք-
պատեն անշուշտ ընթերցողների հոգեւոր
շինութեան: Բայց ուրիշ է ս. Գիրք թարգմա-
նելը — Հրէաները Հին Կտակարան արտադրելիս
ամենամեծ զգուշութիւններ էին դորձ գնում
և չէին համարձակուում մինչև անգամ նկա-
տած տառաւորներն ու աւելորդ գրերն ուղ-
ղել՝ այնչափ մեծ էր պատկառանքը գէպի
Աստուծոյ խօսքը: Մեր ժամանակ ևս հա-
գին գիտնական աշխատանք է դորձ գրուում
Աստուածաշունչի իւրաքանչիւր խօսքի համար
ուղիղ ընթերցումը գտնելու, և երբ հարկ է
լինում մի նոր թարգմանութիւն կամ հրա-
տարակութիւն անել՝ այդ դորձը յանձնուում
է տասնեակ տարիների աշխատութեամբ մաս-
նագիտական հմտութիւն ձեռք բերած և հրա-
շակ ստացած անհատների կամ ամբողջ
յանձնախումբի: Ապա թէ ոչ, քանի տեսակ
և որպիսի աղաւաղումների ենթարկուած ս.
Գիրք պէտք է ունենայինք, եթէ ամէն ոք
գրի սեն ու սպիտակը ծանաչելուց յետոյ
ձեռնհաս համարէր իրեն թարգմանութիւն-
ներ անելու, և իբրև աստուածաշունչ գրուածք
հրապարակ հանելու: Հայր Տաճարի կողմից
աւելի խոհեմութիւն կլինէր, փոխանակ միայն
և եթ ընագիրը տալու ընթերցողին, ազատ
փոխադրութեամբ ձեռք իմաստը հաղորդելու
ջանք անել: այդ ժամանակ նորա դորձը յի-
րաւի մի նոր «սրբազան պատմութիւն» կպառ-
նար և զուցէ աւելորդ կհամարուէր արդէն
մեծ թուով գոյութեան ունեցող նման գրուած-
ների շարքում: Բայց զոնէ հեղինակի ուժից
շատ վեր դորձ էր լինի և չէր տանջի ըն-
թերցողին ամէն տեսակ (ոչ միայն լեզուական)
անհարթութիւններով, ինչպէս օր. Կանոնա-
դանդներին՝ արդարների իմաստութեան մէջ».
«ցրուեց հպարտներին իրենց սրտի մտած-
մունքներով».
«քո անձի միջից էլ սուր կան-
ցնի, որ շատերի սրտի խորհուրդներն յայտ-
նուին».
«մօտ ու թուռն և չորս տարեկան որբ
և այլի էր».
«անապատից խօսակցութեան
ձայն է գալիս».
«ահա կացինը ծառի արմատ-
ների մօտն է գրած».
«ուրիշ էլի շատ բաներ
էր աւետում ժողովրդին մխիթարելով» և չն
և չն — Խնդիրը միայն այսպիսի անհարթու-
թիւնների մօտին չէ, ի հարկ է, որպէս զի կա-

րողանայ մէկը երկու հազար տարի տառ
գրուած աւետարանը վերակենդանացնել կամ
նորա իւրաքանչիւր դարձուածն այնպէս ար-
տայայտել, որ թարգմանութեան մէջ ևս կեն-
դանի խօսք մնայ և իւրաքանչիւր հաւատա-
ցեալի սրտի հետ խօսէ՝ պէտք է ընդունակ
լինի վերափոխուելու հոգեով գէպի այն դարը
և այն աշխարհը, ուր աւետարանն իրօք կեն-
դանի խօսք է եղել, կամ այսպէս ասած՝ ա-
ւետարանական մթնոլորտի մէջ ապրելու: միւս
կողմից նա պէտք է իւր ժողովրդի լեզուն հաս-
կանայ՝ լեզուն, բառի ընդարձակ իմաստով. իսկ
զոցա համար ի միջի այլոց գիտութեան մեծ
պաշար է հարկաւոր մինչ Հայր Տաճար փոքրն
անգամ չունի. նորա կարգացած զրբերի մէջ
«Մաղուկեցութիւնը մի աղանդ էր, որ գոյու-
թիւն ուներ Հրէից մէջ դեռ 200 տարի Բր-
իտանոսից առաջ»... «արտաքոյ Հին Կտակա-
րանի ոչինչ չէր ընդունում»... «անազնի հե-
տեոյներ» ունէր, «ամբաստուր, նշանակում է
հարկահան» և չն: Նա ըստ երեւութին շատ
համեստ կերպարանք է տալիս իւր ձեռնար-
կութեան, բայց մենք՝ գովելով հանդերձ նորա
եռանդն ու ժողովրդի մէջ աւետարանի սեր
և հասկացողութիւն տարածելու ցանկու-
թիւնը, կրկնում ենք՝ նորա կատարած աշ-
խատանքը անաեղի է և ապարդիւն, այդ «ե-
րով և խորթ արտայայտութիւններով լի
գրուածքը աւելի ըմբռնելի չի լինի միջակ
ընթերցողին, քան մեր ոսկեղարեան հրաշալի
աւետարանը: Հայր Տաճարի նման աշխատա-
ւեր քահանաներն աւելի օգտակար կլինեն,
եթէ իրենց եռանդն այն սահմանների մէջ
միայն դորձ գնեն, որ իրենց ստացած կրթու-
թիւնն և ունեցած փորձառութիւնը դժեւ են:

Կ. Վ.